յառաւօտէն մինչև ի Է ժամն չգնացին այնչափ ամ-
բոխն, որ լցվեր էր զՂատրղա իլմանն եւ ի մէջ սա-
րային։ Երբ որ ի դուրս ելաւ ասացին, Նա՛ ձայն ա-
ղաղակին ո՛րպէս կարէ ոք պատմել եւ զճիչ աղախ-
նոցն և զբեկումն ծառայիցն և զհառաչս կանանցն,
զնւաղիլն սեւազգեստիցն եւ զբողոք ազգացն, զլաց
մեծամեծացն եւ զխեղճ տղայոցն, զաղէտ բարեկա-
մացն եւ զկոծ սիրելեացն, որ մինչեւ զամենեսեան
յողբս և ի կոծանս հանեցին, և ոչ մնաց մարդ յայն-
չափ ռամկացն և ամբոխին որ ոչ աղբիւր հանեցին յա-
չաց։ Եւ զհետ նորա երթային մուֆտին եւ ղազի-
էսքէրքն, ղայմախամ Իւսուֆ փաշան, որ առաւօ-
տուս եղև յետ մեռանել սորա, և տէֆտէրտարն Սարի
Ալի էֆէնտի, և այսօր եղև այս եւս, և յենկիչէր ա-
ղասին եւ Ստամպօլ էֆէնտիսին եւ այլք մեծամեծք
բազում անհամար և անթիւ ամբոխ ընդ նմա՝ բերեալ
թաղեցին ի յԱլի փաշա ճամիսին՝ ի սահմանս Վալիտէ
համամին եւ Տիքիլի տաշին(*)։ Այսպէս անց գնաց
անուանին և քաջն Սիաւուշ յազգէն Ապազայի, համ-
շիրակ[1]) և եղբայրակից Իփշիր փաշայի, որ եւս գնա
չար մահուամբ հանեցին յաշխարհէս անցեալ տարիս։
Եւ օրս զմօհրն ուղարկեցին Պօյնուէկրի Մէհէմէտ
փաշային, որ կ՚ուտէր զՇամ՝ թէ զճանապարհ յար-

1) համշիրակք·

(*) **Լուս.** Եւ յորժամ բարձին զնա և տարան ի Այա Սո-
ֆին զնա[մ]աղն վճարեալ. կանայք նորա, քոյր և մայրն և
աղախն[այք] սեւազգեստ լեալ ընդ գլխովն և անձնովն զնա-
ցեալ ոչ ...ացեալ, այլ ողբ առեալ և լաց և ճիչ բառնալով
եկեալ ... Ալի փաշաս տեսանել զհողն և զզիր տեարցն իւ-
րեանց ... և բնակիչք տեղոյն և խանութպանքն ասացին թէ
Ջաղէտս և զխեղճս նոցա տեսանելով խիստ նւաղեցաք և
մեք ընդ նոսա անպատմելի խղճիւ, որ զմեզ զամենեսեան
յողբս և յաղէտո շարժեցին։